



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

«21» հունվարի 2014 թ.

N 203-ՎՊ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի 139-Մ
ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, «ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
ՁԵՎԱԹՈՒՂԹԸ» ԵՎ ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածով, Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 10-ի N 225-Ն
որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 4-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի
2012 թվականի ապրիլի 4-ի՝ <<Հանրակրթական ուսումնական հաստատության
ուսուցչի վարպետության մակարդակի մասին տրվող տեղեկանքը հաստատելու
մասին>> N 139/Մ հրամանով հաստատված հավելվածը շարադրել նոր
խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հաստատել «Ուսուցչի մասնագիտական գործունեության ընդհանրական
գնահատման չափանիշների ձևաթուղթը» և հարցաթերթերը՝ համաձայն Հավելված
2-ի:
3. ԼՂՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ընդհանուր
բաժնին՝ սույն հրամանը ներկայացնել ԼՂՀ շրջանների վարչակազմերի
աշխատակազմերի կրթության բաժնի վարիչներին և հրապարակել «Լուսարար»
թերթում:



Handwritten signature

Ս. ԱՍՐՅԱՆ